ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թ. N 411-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 18-րդ կետի պահանջը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար Ջերմուկ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Ձախափնյակի 3-րդ շենքի ճակատային պատ – 5 քմ
2) Ձախափնյակի 7-րդ շենքի ճակատային պատ – 3 քմ
3) Ձախափնյակի 8-րդ շենքի ճակատային պատ - 3 քմ
4) Ձախափնյակի վերջին կանգառ - 2 քմ
5) Շահումյան փողոցի N 5 շենքի ճակատային պատ - 2քմ
6) Բարեկամության և Շահումյան փողոցների հատման խաչմերուկ՝ վահանակ՝ 18 քմ
7) Կեչուտ գյուղի մշակույթի տան ճակատային պատ - 5քմ
8) Կեչուտ գյուղի մանկապարտեզի շենքի ճակատային պատ - 2քմ
9) Կեչուտ գյուղի նախկին գրասենյակի շենքի ճակատային պատ - 2քմ
10) Կեչուտ գյուղի միջնակարգ դպրոցի շենքի ճակատային պատ - 2քմ
11) Գնդեվազ գյուղի հրապարակում գտնվող առևտրի սրահի ճակատային պատ - 3 քմ
12 Գնդեվազի նախկին բաղնիքի շենքի ճակատային պատ - 3 քմ
13) Կարմրաշեն գյուղի 1-ին փողոցի 8-րդ շենքի ճակատային պատ - 3 քմ
14) Կարմրաշեն գյուղի՝ Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հուշարձանի հարակից տարածք - 3 քմ
15) Հերհեր գյուղի մշակույթի տան ճակատային պատ - 4 քմ
16) Հերհեր գյուղի կենտրոնում գտնվող խանութի ճակատային պատ - 3 քմ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թ. N 412-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 12-րդ կետի պահանջը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների անցկացման համար սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները.

- *Ջերմուկի Մ. Գորկու անվան N 1 հիմնական դպրոցի շենք, հասցեն՝ Շահումյան փողոց N 7*
- *Ջերմուկի «Զատիկ» մանկապարտեզի շենք, հասցեն՝ Ձախափնյակի 2-րդ փողոց N 3*
- *Ջերմուկի կրթահամալիրի շենք, հասցեն՝ Ձախափնյակի 4-րդ փողոցի N 16*
- *Կեչուտ գյուղի մշակույթի տան շենք, հասցեն՝ գ. Կեչուտ, 8-րդ փողոց N 13*
- *Գնդեվազ գյուղի մշակույթի տան շենք, հասցեն՝ գ. Գնդեվազ, 8-րդ փողոց N 1*
- *Կարմրաշենի միջնակարգ դպրոցի շենք, հասցեն՝ գ. Կարմրաշեն, 2-րդ փողոց N 2*
- *Հերհերի միջնակարգ դպրոցի շենք, հասցեն՝ գ. Հերհեր, 20-րդ փողոց, N 4*

2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնները տիրապետող կազմակերպությունների ղեկավարներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 հոկտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021թ. N 413-Ա

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 79-Ն, 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 80-Ն և 2018 թվականի հունվարի 19-ի N 14-Ն որոշումների, հաշվի առնելով «Արդշինբանկ» ՓԲ ընկերության Ջերմուկի մասնաճյուղի կառավարիչ Ա. Հովհաննիսյանի դիմումը (մտից՝ 1533, 2021 թվականի հոկտեմբերի 19) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել «Արդշինբանկ» ՓԲ ընկերությանը «Ջերմուկ» մասնաճյուղին ամրակցված բանկոմատին կից՝ Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 19 հասցեի հարևանությամբ գտնվող էլեկտրասյան վրա տեղադրելու գովազդային ցուցանակ՝ համաձայն գովազդային վահանակի էսքիզի (Թույլտվություն N 9):

2. «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար և ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյունի օգտագործման տրամադրման ծառայության տեղական վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արդշինբանկ» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 հոկտեմբերի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021թ. N 414-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 378-Ա ԵՎ N 379-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ հոկտեմբերի 18-ի N 01 /13.2/6766-2021 գրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 1-ի N 174-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 378-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման նախաբանում «3-րդ» բառը փոխարինել «1-ին» բառով:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 27-ինN 221-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 379-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման նախաբանում «1-ին մասի 2-րդ կետով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 հոկտեմբերի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021թ. N 415-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԵՐԻ ԷՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով, հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ–ճարտարապետ Ա. Գառնիկյանի՝ ս/թ հոկտեմբերի 18-ի զեկուցագիրը (մտից N 1514) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի Գործարանային փողոցի հարակից այգու տարածքը բարեկարգելու և սանիտարական մաքրման նպատակով իրականացնել չորացած ծառերի հատում և բարդիների խորը էտ՝ պահպանելով ծառերի առնվազն 5 մետր բարձրությունը:

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ–ին՝ նշված աշխատանքների կատարման հսկողությունը դնելով համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան վրա:

3. «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ էտման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ տրանսպորտային վառելանյութը և աշխատանքային գործիքները տրամադրել ՀՈԱԿ-ի միջոցներից, առաջացած փայտանյութը և տարածքների մաքրումը կատարել ՀՈԱԿ-ի կողմից՝ համայնքի միջոցների հաշվի:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնակատար Վարդան Սարգսյանին և «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Պ. Հարությունյանին

5.Սույն որոշման պատճեն ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 հոկտեմբերի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021թ. N 416-Ա

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից լիազորված անձի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի դիմումը՝ (մտից N 1551)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը տալ Ջերմուկ համայնքում գտնվող, ՓԲԸ–ին պատկանող բջջային կապի ցանցի արդիականացման աշխատանքներ կատարելու նախագծման թույլտվություն:
2. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 հոկտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021թ. N 417-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱԼՎԱՐԴ ՄՈՎՍԵՍԻ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ալվարդ Մովսեսի Վարդազարյանի դիմումը (մտից՝ N 1560, 26.10.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ գյուղ Կեչուտ, 4-րդ շենքմ թիվ 2 բնակարան, ճշտման նպատակով տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 9-րդ փողոց, 1-ին փակուղի, 5-րդ շենք, N 1 բնակարան:

2. Ալվարդ Առաքելյանին, Մերուժան Առաքելյանին (հանգուցյալ), Վարդան, Արմեն, Արման և Ռուբեն Առաքելյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող 0,049 հա և 0,103 հա մակերեսներով բնակավայրերի նշանակության տնամերձ (բնակելի կառուցապատման) հողամասին (կադաստրային ծածկագրերը՝ համապատասխանաբար՝ 10-002-027-047 և 10-002-064-009) տրամադրել հետևյալ հասցեները՝ համապատասխանաբար՝

Ջերմուկ համայնք, գյուղ Կեչուտ, Երևանյան խճուղի N 27/47 հողամաս

Ջերմուկ համայնք, գյուղ Կեչուտ, Երևանյան խճուղի N 64/9 հողամաս:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 26
Ջեռմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2021թ. N 418-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչագան Սմբատի Մաթևոսյանի դիմումները (մտից N 201՝ 27.01.2021 թ. և N 1562՝ 27.10. 2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հոկտեմբերի 25-ի N 25102021-10-0015 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 6-րդ փողոցի N 9 հասցեում գտնվող 29,73 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 34,51 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 34,51 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչագան Սմբատի Մաթևոսյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Վաչագան Սմբատի Մաթևոսյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝38000 (երեսունութ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝28000 (քսանութ հազար) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վաչագան Սմբատի Մաթևոսյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վաչագան Սմբատի Մաթևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 28

Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պ Ա Տ Ճ Ե Ն

29 հոկտեմբերի 2021թ. N 419-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԳՈՀԱՐ ԵՎ ԱՆԻ ԷԴԳԱՐԻ ՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԼԱՐԻՍԱ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 16 արձանագրության, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Լարիսա Ռաֆիկի Սահակյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1571) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչներ Գոհար Էդգարի Սահակյանի (ծնված՝ 2008 թ. ապրիլի 7-ին) և Անի Էդգարի Սահակյանի (ծնված՝ 2010 թվականի սեպտեմբերի 22-ին) նկատմամբ սահմանված խնամակալությունը դադարեցնել և խնամակալ Լարիսա Ռաֆիկի Սահակյանին ազատել խնամակալի պարտականությունների կատարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լարիսա Ռաֆիկի Սահակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ